

լափառն» . իրափառն եւ բ . տպ . , 68 , եւ ի ծան . 1՝ «Ի չորս օրինակս իրափառն» :

6 . «Տանջանս չարչարանս միահաղոյնս» , Դ , Ը . , 96 (տպ . միահաղոյն , եւ ի ծան . 1՝ «Յերիս օրինակս միահաղոյնս» ) . այսպէս եւ բ տպ . , 98 , եւ ի ծան . 1 :

7 . «Յանձին կալան նորա Եւսերի գի քանի» , Դ , Ը . , 97 (տպ . քանի , եւ ի ծան . 1՝ «Յերիս օրինակս գի քանի» ) . այսպէս եւ բ տպ . , 100 , եւ ի ծան . 1 :

8 . «Աւանդոցն» , Ե , Լա , 228 (տպ . աւանդոցն , եւ ի ծան . 1՝ «Ի չորս օրինակս աւանդոցն» ) . այսպէս եւ բ տպ . , 234 , եւ ի ծան . 1՝ «Ի վեց օրինակս աւանդոցն» :

9 . «Եւ կամ ծափս Հարկանելով» , Ե , Լա , 229 . տե՛ս եւ էջ 121 , «Մափս զծափի Հարեալ մեծաւ զղջմամբ» , Դ , ԺԵ . (տպ . ափս , եւ ի ծան . 1՝ «Ի չորս օրինակս կամ ափս . յօրինակի միում կամ ծափս . մեզ այսպէս ուղղել պատշաճ դատեցաւ» ) . այսպէս եւ բ տպ . , 236 , եւ ի ծան . 1՝ «Ի չորս օրինակս կամ ափս» եւն . ափս եւ Չ Աբր . յորմէ եւ տպ . Բ . Պատկան . , 193 :

Գ

ՈՒՂՂՈՒԹԻՒՆՔ ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ ԶՈՐՍ ԶԱՌՆՈՒ ՅԱՆՁՆ Հ . ԱՐՄԵՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

1 . «Որում անուն էր որդւոց» , Գ , ԺԹ , 49 (տպ . իւր , եւ ծան . 1՝ «Յամենայն օրինակս „որում անուն էր որդւոց“ » ) . այսպէս եւ բ տպ . , 49 :

2 . «Այս ես եւ այս եւ յայտ չափու , եւ այս անցք» , Ե , Է , 208 (տպ . «այսպէս եւ այս , եւ յայտ չափու եւ այս անցք» , եւ ի ծան . 1՝ «Յամենայն օրինակս Արշակայ . այս ես եւ այս» ) . այսպէս եւ բ տպ . , 213 եւ ծան . 2 :

3 . «Մեծախումբ ժողովք» , Ե , Լա , 230 (տպ . ժողովովք , եւ ի ծան . 1՝ «Յամենայն օրինակս ժողովք» ) . այսպէս եւ բ տպ . , 236 , եւ ծան . 2 :

[4 .] «Որոց գրիկունսն տէրունիսն» , Գ , Ժ , 23 (բ տպ . , 23) : Այսպէս գրէ Հ . Աբր . սէն ի Զրգ . Բեր . , Երես 430 , յօդ . 1073 , ուր եւ ասէ ի ծան . 1 . «Իրտելի է յերիս օրինակս Բիւզանդայ զի նախադաս վանկն է ըն , Զաղջիկըն կնութիւն [Գ , Թ . , 21] , գրիկունսն տէրունիսն , Յէջսն սինկական լեռնէն . եւ թուի թէ այն ըն հերիք համարեալ իցէ եւ ի տեղի նախորի» [285] :

Իսկ տպ . Բիւզանդայ ունի «գրիկունսն ի տէրունիսն» , եւ ի ծան . 1՝ «Յամենայն օրինակս գրիկունսն տէրունիսն» : Այսպէս եւ Չ Աբր . , թէպէտ եւ տպ . Բ . Պատկան . , 20 , գրէ «գրիկունսն ի տէրունիսն» : Ի Կորեան Վարս Մաշտոցի , 11 , «որոց քիկունսն ի տէրունիսն» :

[5 .] «Զքազաւորէն Յունաց դառ ինքն եկեալսն դեսպանան» , Գ , Իա , 57 (բ տպ . , 58) : Այսպէս գրէ Հ . Աբսէն ի Զրգ . Բեր . , Երես 432 , յօդ . 1075 , հանդերձ եւ ա՛յլ վկայութեամբք : Այսպէս եւ Այտընեան , Գնն . Բեր . , Երես 91 , ծան . 63 : Այսպէս եւ Չ Աբր . «գրգրէն» [պատկուով] :

Իսկ տպ . Բիւզանդայ ունի գ՛ի քազաւորէն , առանց նշանակելոյ ա՛յլ ընթերցուած . գ՛ի քազաւորէն եւ տպ . Բ . Պատկան . , 49 :

Դ

ՈՒՂՂՈՒԹԻՒՆՔ ԿԻՏԱԳՐՈՒԹԵԱՆ

1 . «Հարցեւքնին առնել . հրամայէր» , Գ , Իա , 5 (բ տպ . , 57) . առնել հրամայէր :

2 . «Հրովարտակօփ կաքողիկոսաց առ կաթողիկոսն» , Դ , Դ , 72 . հրովարտակօփ՝ կաքողիկոսաց . — այլ ուղղոյն է՝ «հրովարտակաւք առ կաթողիկոսաց կաթողիկոսն» , որպէս եւ բ տպ . , 73 , տե՛ս :

3 . «Յուրախութիւն երեսաց քոյ» : Ոյք այժմ , Դ , Ե , 85 (բ տպ . , 87) . քոյք , ոյք :

4 . «Յօտար եւ ի հեռաստան երկրէ վասն որոյ յղեալ գոսա հօր քազաւորի , եւ մեծի» , Դ , Ե , 85 (բ տպ . , 89) : «Երկրէ , վասն . . . գոսա , հօր թաղաւորի եւ» : — Ըստ իս՝ «երկրէ յղեալ գոսա՝ հօսար թաղաւորի եւ մեծի տեան հրեշտակք են . վասն որոյ մի՛ ինչ լիցի» :

5 . «Ո՛րպէս յար դործ երթեալ էիք՝ վըճարեցէք» , Դ , Ժ , 102 (բ տպ . , 105) . «Ո՛րպէս՝ յոր . . .» :

6 . «Եթէ ոք ումեք ինչ պարտիցի եւ որում պարտիցին , եկեալ յայն տեղին՝ առանց» , Դ , Ժբ , 106—107 (բ տպ . , 109) . «պարտիցի , եւ որում պարտիցին՝ եկեալ յայն տեղին , առանց» :

7 . «Ընդ իւր գեւղսն տեսանել» , Դ , Ժդ , 114 (բ տպ . , 117) . գեւղսն՝ տեսանել :

8 . «Բազմէին , զմիագոյն զմիանշան զհամահանդերձ գարդու : Եւ զմիօրինակ» , Դ , Ժզ , 124 (բ տպ . , 128) . «բազմէին : Զմիագոյն . . . գարդու եւ» :

9 . «Ի գանձուան հրամայէր , եւ տայր հրամանս պահել» , Դ , Ժզ , 126 (բ տպ . , 130) . «Ի գանձ տան հրամայէր եւ» :

10 . «Զօրքն պատերազմիկք Հայոց համակ , գայս բանս ասելով» , Ե , Ե , 201 (բ տպ . , 205) . «Հայոց , համակ գայս» :

11 . «Զամենայն կարգան տապալեալ ուղղէր» , Ե , Իա , 214 (բ տպ . , 219 , ուր գրի տապալեալս) . տապալեալ՝ ուղղէր :

12 . «Եւ զնացեալք գային դէմ յանդիման յիւրեանց երկիրն արարեալ» , Ե , Լէ , 239 (բ տպ . , 246) . «գային , դէմ՝ յանդիման յիւրեանց երկիրն՝ արարեալ» :

13 . «Սոյնպէս սպարապետին Մանուկի ունէին» , Ե , ԼԸ , 246 (բ տպ . , 253) . Մանուկի . ունէին :

14 . «Եւ էր սուրբն Գինդ լի Հողոսի Աստուծոյ . եւ ոյք ընդ նա , ըստ նախ օրինակի առնէին» , Զ , Ժզ , 272 (բ տպ . , 281) . «Աստուծոյ , եւ ոյք ընդ նա՝ ըստ նախ օրինակի . առնէին» :

6 Յունիս 1903—14 Յունիս 1903  
[ՆՈՐԱՅՐ Ն . ԲԻԻԶԱՆԴԱՅԻ]\*

\* Բնագրում՝ անստորագրել :

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ Ի ՄԵԾ ԵՒ Ի ՓՈՒԲ ՍՈՎՐԱՏԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՍՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ\*

8 Սեպտեմբեր 1912 Յ՛30 Յունիսի 1907 կարծիք ծնան լիմ միտս՝ որ թերեւս փելոն Տիրակացի , յետ թարգմանելոյ զՄեծ Սոկրատն , նոյն ինքն համառօտած է գայն ի փոքր Սոկրատ , ինչպէս որ Սարգիս Շնորհալի յետ ընդարձակ Մեկնութեան կաքողիկեայց գրած է նա եւ զՀամառօտն :

Այլազգ չկարեն մեկնուիլ 687—688 երեսն փոքր Սոկրատայ՝ որ քաղեալք են ի 486 երեսէ Մեծ Սոկրատայ :

Գտի սպա ի 10 Աւգոստոսի 1912 զի եւ Մեսրոպ Վարդապետ Տէր Մովսէսեան զնոյն կարծիս կը յայտնէ երկբայանօք ի Յառաջաբանին Սոկրատայ յերես 27 . «Առանձին ուշադրութեան արժանի է «Թարգմանեաց առաջին ձեռնարկութեամբ» , որով ակնյայտնի զգալ է տալիս , որ զիտէր նաեւ երկրորդ ձեռնարկութեամբ թարգմանութիւնը , եւ կամ ուրիշ խօսքով Համառօտութիւնը» . եւ յաւելու ի ծան . 3 . «Արդեւք եկեց ինքն փոքր Տիրակացին չէ եղիլ համառօտողը . բայց այս

զէպքում զժուար է բացատրում յատուկ անուանների այլանդակութիւնը՝ ըստ իս տուկ անուանց այլանդակութիւնը՝ ըստ իս վերագրելի են ամենուրեք Ձեռագրաց ընդօրինակողաց տգիտութեան , մանաւանդ զի ուր աղաւաղեալ է ի միում Ձեռագրի՝ ուղիղ գրի յայլում Ձեռագրի :

«Տէր Ներսէս Կամսարական , ապիհիւ պատ պատրիկ , որ եկեղեցեաց ես ինող» ակնարկեն յայն Ներսէս Կամսարական՝ որ իշնարկեալ Հայոց ամս երիս (Ստ . Ասողիկ , խանացաւ Հայոց ամս երիս Յ . Մարտի , Բ , 101) , յամս 689—691 (ըստ Յ . Մարտի , Բ , 101) , յամս 688—691 (ըստ Յառառտեմբեր , 522) , կամ 688—691 (ըստ Յառառտեմբեր , Պատմութեան Սոկրատայ , երես 27) , ընթերցեալ յԱսողիկ ամս չորս :

Կին Ներսէս Կամսարականիս կոչէր Շուշան , եւ որդի նոցա Հրահատ , ըստ Արձանազրին եկեղեցոյն թանայ (Ալիշան , Այրաբատ , 138 , հանդերձ նմանահանութեամբ , եւ Յառաջարան Պատմութեան Սոկրատայ , երես 27) :

Ըստ Յ . Մարտիուարտի՝ այս Շուշան , կին Ներսէսի Կամսարականի , է որ յեղի ի Ղե-

\* Այս անտիպը պահուած է Նորայրի Ն . Բիւզանդացու գիւնում , Տուփ 5 : Այս ընդհանուր խորագրել մինչեւ յաջորդ ենթավերնագրեր հեղինակը շարադրել է 1—4 համարակալուած էջերի վրայ (Մարտիրոս Մի-նասեան) :

1 Մեսրոպ Վարդապետ Տէր Մովսէսեան , Սոկրատ , Յառաջարան , 27 , ծան . 3 : Այլ այլանդակութիւնք ՁԶ-աց ընդօրինակողաց են , 10 Աւգոստոս , 1912 :

